

ՀՀ արդարադատության նախարարություն

Միջոցառում 9.

Մշակել խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի փաստաթղթավորման օրինակելի նմուշի ձևաթղթեր՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասով արդյու-նավետ քննության իրականացման և փաստաթղթավորման մասին ձեռնարկի (Ստամբուլի արձանագրություն) չափանիշներին համապատասխան:

Հաշվետվություն

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Կալանավորած անձի կամ դատապարտյալի ամբուլատոր բժշկական քարտի, հիվանդության պատմագրի, հիվանդության պատմագրից քաղվածքի, խոշտանգման և վատ վերաբերմունքի հետ կապված բժշկական հետազոտությունների արձանագրության ձևերը ու խոշտանգման և վատ վերաբերմունքի հետ կապված բժշկական հետազոտությունների արձանագրության ձևի լրացման, կալանավորված անձի և դատապարտյալի ամբուլատոր բժշկական քարտի, հիվանդության պատմագրի լրացման ուղեցույցները հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրամանի նախագիծը:

Միջոցառում 21.

Մշակել «Քրեական գործերով իրավական փոխօգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Հաշվետվություն

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և 2017թ. մայիսի 10-ի թիվ 01/17.2/7642-17 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Քրեական գործերով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև դրանից բխող Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագծում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունները:

Նախագիծը շրջանառվել է «Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված կարգով և դրա վերաբերյալ ստացվել են շահագրգիռ բոլոր մարմինների դիտողություններն ու առաջարկությունները:

Նախագիծը տեղադրվել է նաև www.e-draft.am կայքում՝ հանրային քննարկումներն ապահովելու համար:

Այդուհանդերձ, օրենքի նախագծի վերաբերյալ կարծիքները ներկայացնելուց բացի, մի քանի գերատեսչությունների կողմից բարձրացվել են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի և օրենքի նախագծի համապատասխանեցման որոշ խնդիրներ, որոնք առանձին և համալիր լրացուցիչ քննարկման կարիք ունեն:

Այդ նպատակով ՀՀ արդարադատության նախարարությունը անհրաժեշտ է համարում քննարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում համապատասխան փոփոխություններ կատարելու հարցը օրենսգրքի նախագծման աշխատանքային խմբի անդամների հետ՝ օրենքի նախագծի և ՀՀ ՔԴՕ նախագծի ընդունման դեպքում հնարավոր անհամապատասխանությունները բացառելու համար:

ՀՀ առողջապահության նախարարություն

Միջոցառում 1.

Ընդունել «Բժշկական հաշտարարի համակարգի գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգ

Հաշվետվություն

Աշխատանքներն ընթացքի մեջ են: Նախագիծը մշակվել է և ս/թ հունիսի 14-ի թիվ ԼԱ/11.2/7540-17 գրությամբ կարծիքի է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, ՀՀ դատական դեպարտամենտ, Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ, ՀՕՄ-ի Ախուրյանի «Մոր և մանկան առողջության կենտրոն» հիմնադրամ և այլ կազմակերպություններ: Նախագիծը տեղադրվել է նաև e-draft կայքում: Կարծիքիների ամփոփումից հետո Նախագիծը սահմանված ժամկետում (2017 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ) կներկայացվի ՀՀ կառավարության աշխատակազմ:

Միջոցառում 2.

Առաջադեմ փորձի հիման վրա տեղայնացնել և ներդնել կլինիկական ուղեցույցները

Հաշվետվություն

Աշխատանքներն ընթացքի մեջ են: 09.01.2017թ.-31.03.2017թ. ընկած ժամանակահատվածում թարգմանվել է թվով 243 կլինիկական ուղեցույց: Մեկնարկային խմբագրման արդյունքում ուղեցույցների առաջնային քանակը նվազել է մինչև 215-ի: Ներկայումս թվով 53 ուղեցույց տեղայնացվել է:

Միջոցառում 3.

Առաջադեմ փորձի հիման վրա պացիենտի վարման գործելակարգերի տեղայնացում և ներդրում

Հաշվետվություն

Աշխատանքներն ընթացքի մեջ են: Ներկա փուլում մշակվել է թվով 2 օրինակելի գործելակարգ, տեղայնացվել է թվով 40 գործելակարգ:

Միջոցառում 4.

Ներդնել էլ-առողջապահության տեղեկատվական համակարգ

Հաշվետվություն

Աշխատանքներն ընթացքի մեջ են: Պետական պատվեր իրականացնող բժշկական հաստատությունների համար ձևավորվել է բիզնես շտեմարան և իրականացվել է տվյալների մուտքագրում էլեկտրոնային առողջապահության տեղեկատվական համակարգ: Իրականացվել է պետական մասնակցությամբ շուրջ 380 ԲՀ-ների տեխնիկական հագեցվածության գույքագրում և անհրաժեշտ ֆինանսավորման գնահատում:

Էլ. առողջապահական համակարգում մշակվել են պետական պատվերի շրջանակներում իրականացվող գրանցումների և հաշվետվությունների ձևերը:

Փորձարկվել և իրական աշխատանքի են անցել սերվերային համակարգերն ու էլ.առողջապահական համակարգի նոր տարբերակը: Մինչ համակարգը սպասարկող օպերատորի հիմնադրումը, ստեղծվել է 10 օպերատորից կազմված ժամանակավոր զանգերի կենտրոն:

Պետական պատվեր իրականացնող 483 ԲՀ-ներից ստացվել և համակարգում ներմուծվել է բժշկական և սպասարկող անձնակազմի վերաբերյալ տեղեկատվությունը ծրագրային իրավասությունների տրամադրման և բժշկական անձնակազմի ռեգիստրի ստեղծման նպատակով:

Համակարգում մուտքագրված է ավելի քան 32,000 օգտատիրոջ տվյալ (որից 22,000 կազմում է բուժանձնակազմը):

Պատրաստվել են էլ-առողջապահական համակարգում պետական պատվերի շրջանակներում իրականացվող գործառույթները նկարագրող թվով 28 ուսումնական տեսանյութ, որոնք տեղադրված են նախարարության պաշտոնական կայքում, youtube-ում բացված ehealth Armenia էջում և armed.am էջում:

Էլ. առողջապահական համակարգի վերաբերյալ դասընթաց են անցել պետական պատվեր իրականացնող բժշկական հաստատությունների հաշվառում իրականացնող աշխատակիցները:

Համակարգը միացվել է ոստիկանության բնակչության պետական ռեգիստրին, ինչն ապահովում է քաղաքացիների նույնականացումը՝ բացառելով կրկնակի ֆինանսավորման հնարավոր դեպքերը:

Համակարգին ինտեգրվել է Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնին, ինչն ապահովելու է ՀՀ-ում գրանցված դեղերի ցանկերի առցանց թարմացումը համակարգում:

ԲՀ-ներից հավաքագրվել, բնակչության պետական ռեգիստրի միջոցով ստուգում են անցել և համակարգ են ներմուծվել յուրաքանչյուր բժշկական հաստատությանը կցագրված բնակչության վերաբերյալ տվյալները (շուրջ 2,700,000) և դեռևս շարունակում է տվյալների շտկման գործընթացը:

2017թ. հունվարի 1-ից. մեկնարկել է պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայությունների վերաբերյալ գրանցումների և հաշվետվությունների ներկայացման անցումային փուլը:

armed.am կայքում քաղաքացիների համար քարտեզի վրա ներկայացվել են պետական պատվեր իրականացնող բոլոր բժշկական հաստատությունները, յուրաքանչյուր բժշկական հաստատությունում աշխատող բժիշկների վերաբերյալ տեղեկատվությունը:

Պետական պատվերի պայմանագրերում էլ. առողջապահական համակարգի ներդրման հետ կապված համապատասխան պահանջներ են սահմանվել ԲՀ-ների համար:

Թարգմանվել և համակարգ են ներմուծվել ICD10PCS, LOINC բժշկական միջամտությունների և չափումների միջազգային ստանդարտները: armed.am-ում ստեղծվել է հաճախ տրվող հարցեր պատուհանը: 2017 թվականի մայիսի 1-ից անցում է կատարվել իրական ռեժիմում էլ. առողջապահական համակարգում պետական պատվերի շրջանակներում գրանցումների իրականացմանը և ֆինանսավորման համար հաշվետվությունների ներկայացմանը:

Միջոցառում 5.

Ապահովել բոլոր ՀՀ առողջապահական հաստատություններում մահացության դեպքերի վերաբերյալ ըստ հատկանիշների (օր.՝ մահվան պատճառ, հիվանդություն, տարիք, սեռ, հաշմանդամության տեսակ և այլն) (առկայության դեպքում), վարվող վիճակագրության հրապարակայնությունը

Հաշվետվություն

Աշխատանքներն ընթացքի մեջ են:

Միջոցառում 6.

Վերանայել բժշկական նպատակներով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործման կարգը և պայմանները սահմանող իրավական ակտերը

Հաշվետվություն

Աշխատանքներն ընթացքի մեջ են: Մշակման փուլում է գտնվում «Բժշկական նպատակներով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործման կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանի նախագիծը:

Միջոցառում 7.

Կատարելագործել բժշկական գաղտնիքի մշակման և տարածման, ինչպես նաև բժշկական գաղտնիքի խախտման համար պատասխանատվություն սահմանող կարգավորումները

Հաշվետվություն

Ներկայումս լրամշակման փուլում է գտնվում «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով օրենքը լրացվել է առանձին՝ «Բժշկական գաղտնիքը և դրա փոխանցմանն ու մշակմանը ներկայացվող պահանջները» հոդվածով: Սույն լրացման հիման վրա համապատասխանաբար խմբագրվել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածը խմբագրվել է: Մասնավորապես, Նախագծով տրվել է բժշկական գաղտնիքի հասկացությունը, դրա փոխանցման պայմաններն ու դեպքերը, պահպանման ժամկետները և այլն: ՀՀ վարչապետի 24.05.2017թ. թիվ 02/14.7/12227-17 հանձնարարականի հիման վրա նշված օրենքների նախագծերը լրամշակման փուլում են և վերջնական տարբերակով կներկայացվեն ՀՀ կառավարություն ս/թ նոյեմբերի 30-ին:

Միջոցառում 8.

Ձևավորել հասարակական դիտորդական խումբ ՀՀ-ում հոգեկան առողջության ոլորտում բժշկական և խնամքի ծառայություններ տրամադրող կազմակերպություններում՝

ծառայությունների որակի և մարդու իրավունքների պաշտպանության վիճակի նկատմամբ հասարակական վերահսկողության ապահովման նպատակով

Հաշվետվություն

Աշխատանքներն ընթացքի մեջ են:

Միջոցառում 9.

Մշակել խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի փաստաթղթավորման օրինակելի նմուշի ձևաթղթեր՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասով արդյունավետ քննության իրականացման և փաստաթղթավորման մասին ձեռնարկի (Ստամբուլի արձանագրություն) չափանիշներին համապատասխան

Հաշվետվություն

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված նախագծերը կարծիքի են ներկայացվել ՀՀ առողջապահության նախարարություն, որտեղ նախագծերը ուսումնասիրվել և վերջիններիս վերաբերյալ առաջորկություններն ու դիտողությունները ս/թ հունիսի 30-ի թիվ ԼԱ/02.1/8339-17 գրությամբ առաքվել է ՀՀ արդարադատության նախարարություն:

Միջոցառում 40.

Ուսումնասիրել աշխատանքային հարաբերություններում աշխատողների իրավունքների պաշտպանության արտադատական ազգային մեխանիզմի ներդրման հնարավորության հարցը

Հաշվետվություն

Աշխատանքներն ընթացքի մեջ են: Ներկա փուլում ուսումնասիրվում են աշխատանքային հարաբերություններում աշխատողների իրավունքների պաշտպանության արտադատական ազգային մեխանիզմի հնարավոր տարբերակները:

Միջոցառում 69.

Քայլեր ձեռնարկել պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված արդյունավետ պայքարի համար

Հաշվետվություն

Պտղի սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման կանխարգելման միջոցառումները կատարվել են մի քանի ուղղություններով՝ օրենսդրական

փոփոխությունների ու հանրության մեջ աբորտների, մասնավորապես սելեկտիվ աբորտների նկատմամբ մերժողական վերաբերմունքի ձևավորման ու կանխարգելման միջոցով: Իրականացվել են լայնածավալ միջոցառումներ բնակչության շրջանում նրանց իրազեկման և իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ, շեշտադրելով սելեկտիվ աբորտների վտանգավոր հետևանքները ոչ միայն մոր առողջության, այլև երկրի ժողովրդագրական դիսբալանսի ու անվտանգության առաջացման առումով:

Այդ նպատակով նախաձեռնվել և լրատվության տարբեր միջոցներով հանդես են եկել նախարարության ներկայացուցիչները, շուրջ 5 հաղորդում, տարբեր կազմակերպությունների, այդ թվում եկեղեցու ծառայողների ներգրավմամբ, սելեկտիվ աբորտների հետևանքների և հասարակության մեջ մերժողական վերաբերմունքի ձևավորման համար, ինչպես նաև հարցին վերաբերող 3 հոդվածի հրապարակում:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ ՀՀ առողջապահության նախարարության համագործակցության շրջանակներում 2017թ.առաջին կիսամյակում նույնպես շարունակվել է ծննդագնության հիվանդանոցային ծառայություններ մատուցող հաստատությունների աշխատակիցների, այդ թվում՝ նշված ոլորտի ղեկավարության, երեխայի սեռը որոշելու նպատակով ուլտրաձայնային հետազոտություն կատարող անձնակազմի և գինեկոլոգների համար ուսուցողական ծրագրեր:

2016 թվականի ընթացքում նախատեսված 48 հաղորդումներից նկարահանվել և հեռարձակվել է 44 հեռուստա- և ռադիոհաղորդում, իսկ 4-ը՝ իրականացվել են 2017թ. ընթացքում:

Ֆեյսբուք սոցիալական ցանցում 2015թ. բացվել է «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» խումբը, որին անդամակցում են 1168 օգտատեր, 2017թ.առաջին կիսամյակում անդամակցվել են ևս 320 օգտատեր:

(հղումը՝ <https://www.facebook.com/groups/409020602617094/>):

Համացանցում և խմբի էջի վրա տեղադրվում են ծրագրային գործողությունների վերաբերյալ բոլոր նյութերը, թեմային վերաբերող հայաստանյան և միջազգային մամուլում և այլ աղբյուրներում հրապարակվող նյութերը, նորություններն ու հրապարակումները, տեսանյութերը, որի շրջանակներում պարբերաբար տեղի են ունենում քննարկումներ:

Շնորհիվ ձեռնարկված աշխատանքների՝ արձանագրվել է նորածինների սեռերի անհամամասնության կրճատման որոշակի միտումներ. եթե 2014-2015թթ. 100 աղջկա դիմաց ծնվել են 113 տղա, ապա 2016 թվականին 112 տղա:

ՀՀ քննչական կոմիտե

Միջոցառում 9.

Մշակել խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի փաստաթղթավորման օրինակելի նմուշի ձևաթղթեր՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասով արդյու-նավետ քննության իրականացման և փաստաթղթավորման մասին ձեռնարկի (Ստամբուլի արձանագրություն) չափանիշներին համապատասխան

Հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կողմից մշակվել է խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի փաստաթղթավորման օրինակելի նմուշի ձևաթուղթ, որը համապատասխանեցվել է՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասով արդյունավետ քննության իրականացման և փաստաթղթավորման մասին ձեռնարկի (Ստամբուլի արձանագրություն) չափանիշներին:

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն

Միջոցառում 13.

Ոստիկանության ծառայողների համար կազմակերպել շարունակական վերապատրաստումներ հավաքների ժամանակ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի, միջազգային լավագույն փորձի պատշաճ կիրառման վերաբերյալ

Հաշվետվություն

2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետում, համաձայն կազմված ուսումնական և առարկայական թեմատիկ պլանների, անցկացվել են հավաքների ժամանակ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի, միջազգային լավագույն փորձի պատշաճ կիրառման վերաբերյալ դասախոսություններ.

- 21.01.2017-17.02.2017 թթ. ՀՀ ոստիկանության համայնքային ոստիկանության միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար /23 ծառայող/,
- 12.04.2017-12.05.2017 թթ. ՀՀ ոստիկանության համայնքային ոստիկանության միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար /22 ծառայող/:

ՀՀ ոստիկանության միջին խմբի պաշտոններում նոր նշանակված այն ծառայողների համար /15 ծառայող/, ովքեր պետք է անցնեն վեցամսյա փորձաշրջան 06.06.2017թ. մեկնարկել է եռամսյա վերապատրաստման դասընթացները, որի շրջանականերում ևս ուսումնասիրվում է «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

Միջոցառում 4.

Ներդնել էլ-առողջապահության տեղեկատվական համակարգ

Հաշվետվություն

1. Ծրագրի 9-րդ կետով նախատեսված է մշակել խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի փաստաթղթավորման օրինակելի նմուշի ձևաթղթեր՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասով արդյունավետ քննության իրականացման և փաստաթղթավորման մասին ձեռնարկի (Ստամբուլի արձանագրություն) չափանիշներին համապատասխան:

Տվյալ գործողության կատարման վերաբերյալ պետք է նշել, որ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի փաստաթղթավորման օրինակելի նմուշի ձևաթղթեր՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասով արդյունավետ քննության իրականացման և փաստաթղթավորման մասին համապատասխան նախագիծ է մշակվել ՀՀ արդարադատության նախարարության կողմից և 2016 թվականի հուլիսի 12-ին ներկայացվել է Պաշտպանի աշխատակազմ՝ կարծիքի: Ներկայումս տարվում են նախագծի, ինչպես նաև առկա միջազգային չափանիշների քննարկման աշխատանքներ:

2. Ծրագրի 11-րդ կետով նախատեսված է իրավապահ մարմինների աշխատողների և փաստաբանների համար 2017-2019 թվականներին պարբերաբար իրականացնել խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ վերապատրաստումներ:

Նշված գործողության իրականացման նպատակով Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության համագործակցությամբ «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են դասավանդողների վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել են նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները:

Դասընթացներին մասնակցած ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին հրավիրել են անցկացնել ՀՀ արդարադատության

նախարարության քրեակատարողական վարչության ծառայողների վերապատրաստումներ 2017 թվականի ընթացքում: Դասընթացների հիմնական նպատակներն են եղել զարգացնել ծառայողների գիտելիքները բանտային բժշկության և ազատությունից զրկված անձանց իրավունքների վերաբերյալ, մասնավորապես՝ քննարկել քրեակատարողական հիմնարկներում բժշկական էթիկայի խնդիրները, խոցելի խմբերի առանձնահատկություններն ազատությունից զրկման վայրերում, խոշտանգումների և վատ վերաբերմունքի արգելքը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց հիմնարար իրավունքներին առնչվող այլ թեմաներ:

2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն Արդարադատության ակադեմիայում իրականացրել են նաև գործող քննիչների վերապատրաստում «խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը», ինչպես նաև «Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը» թեմաներով:

3. Ծրագրի 69-րդ կետով նախատեսված է քայլեր ձեռնարկել պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված արդյունավետ պայքարի համար, որի արդյունքում պետք է ստեղծվեն պայմաններ պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների թվի նվազման համար: Տվյալ գործողության իրագործմանն ուղղված քայլերը սահմանվել է, որ պետք է պարբերական բնույթ կրեն, իսկ պատասխանատու մարմին և համակատարողներ, ի թիվս այլ մարմինների, սահմանվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը վերջինիս համաձայնությամբ:

Նշված գործողության շուրջ ձեռնարկված քայլերի վերաբերյալ պետք է նշել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը պարբերաբար կազմակերպում է տեղեկացվածության բարձրացմանն ուղղված արշավներ և քննարկումներ: Մասնավորապես, ճանաչողական այցով Պաշտպանի աշխատակազմ են այցելել մի շարք հանրակրթական ուսումնական հաստատությունների և երեխաների խնամք իրականացնող կենտրոնների սաներ, ինչպես Երևանից, այնպես էլ՝ Հանրապետության մի շարք մարզերից: Մարդու իրավունքների պահպանության ու պաշտպանությանն ուղղված մի շարք հարցերի ներկայացման և դրանց շուրջ կազմակերպված քննարկումների ընթացքում ներկայացվում է նաև պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական

ընդհատումների խնդիրները և վերջիններիս կանխարգելմանն ուղղված արդյունավետ պայքարի հիմնահարցերը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Միջոցառում 35.

Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների միջոցով, պետության կողմից տրամադրվող միջոցների որոշակի գումարի սահմաններում, ընտանիքների անապահովության գնահատման համակարգի հիման վրա իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերից դուրս մնացած կարիքավոր ընտանիքների համար ներդնել սոցիալական աջակցության կենսաապահովման ծրագրային փաթեթ

Միջոցառում 36.

Ներդնել սոցիալական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայությունների և ծրագրերի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման արդյունավետ համակարգ

Հաշվետվություն

Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի մշտադիտարկման և գնահատման միասնական համակարգի ներդրման գործընթացի շրջանակում ընդունվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 23.12.2016թ. թիվ 121-Ա/1 հրամանը, համաձայն այդ հրամանով հաստատված ծրագրերի ցանկի և ժամանակացույցի՝ 2017թ. առաջին կիսամյակի ընթացքում, իրավական ակտերում կատարված փոփոխություններին համապատասխան, լրամշակվել են զբաղվածության կարգավորման պետական **11 ծրագրերի** տեղեկանքները, մոնիթորինգային անձնագրերը և ցուցանիշները, հստակեցվել են տվյալների ստացման աղբյուրները: Ընթացքի մեջ են տեղեկատվության հավաքագրման աշխատանքները: Տվյալների վերլուծության և գնահատման արդյունքում կկազմվի ամփոփ հաշվետվություն, որը կքննարկվի բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Բոլոր առաջարկությունների հիման վրա լրամշակված հաշվետվությունը սահմանված կարգով և ժամկետում՝ «Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի» հետ միասին կներկայացվի ՀՀ կառավարություն:

ՀՀ ԱԱՀ նախարարի 2016թ. հունիսի 28-ի N 70-Ա/1 հրամանով հաստատված մեթոդաբանության հիման վրա մշակվում (լրամշակվում) են սոցիալական պաշտպանության ոլորտի **38 ծրագրերի** տեղեկանքները, ՄԳ անձնագրերը և ցուցանիշները:

Ավարտվել են սոցիալական պաշտպանության ոլորտի թվով **14 ծրագրերի՝** (երեխաների հիմնահարցերի ոլորտ՝ 6, սոցիալական աջակցության ոլորտ՝ 5, հաշմանդամների հիմնահարցերի ոլորտ՝ 3) տվյալների հավաքագրման դաշտային աշխատանքները. կազմվել է ամփոփ հաշվետվություն և ներկայացվել աշխատանքային խմբին: Արդյունքների վերաբերյալ կազմակերպվել է քննարկում բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, լրամշակված հաշվետվությունն ընդունվել է ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից:

Ընթացքի մեջ են քանակական ցուցանիշների վերաբերյալ տվյալների ստացման և գնահատման աշխատանքները:

Միջոցառում 38.

Բնակչության սոցիալական պայմանների բարելավման նպատակով՝ ներդնել սոցիալական պաշտպանության ոլորտի միասնական տեղեկատվական համակարգ՝ (էլեկտրոնային սոցիալական ծառայությունների տեղեկատվական համակարգ) հաշվի առնելով անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենսդրության պահանջները

Հաշվետվություն

Սոցիալական պաշտպանության ոլորտի միասնական տեղեկատվական համակարգի (էլեկտրոնային սոցիալական ծառայությունների տեղեկատվական համակարգ) նախագծման, մշակման և ներդրման աշխատանքների իրականացման նպատակով «Այ Բի Էմ Արևելյան Եվրոպա և Ասիա» ընկերության և «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) միջև 29.12.2016թ. կնքվել է համաձայնագիր, որի համաձայն պետք է իրականացվի Սոցիալական պաշտպանության միասնական տեղեկատվական համակարգի նախագծման, մշակման և ներդրման պահանջների բացահայտման փուլը: Համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

– Զբաղվածության ոլորտում մատուցվող ծառայությունների ուսումնասիրություն, փաստաթղթավորում, Այ Բի Էմ Կուրամ հենքով այդ ծառայությունների մատուցման տեսլականի և ռազմավարության մշակում և հաստատում,

– Մշակված և հաստատված փաստաթղթերի փաթեթի հիման վրա զբաղվածության ոլորտում առկա բիզնես-գործընթացների Այ Բի Էմ Կուրամ հենքով ավտոմատացման նախնական աշխատանքների իրականացում,

- Այ Բի Էմ Կուրամ ծառայությունների մատուցման համար Տարածաշրջանային տեխնոլոգիական կենտրոնի (SSԿ) հիմնման նախնական աշխատանքների իրականացում,
- Սոցիալական պաշտպանության ոլորտի մյուս բոլոր տեղեկատվական համակարգերի՝ Այ Բի Էմ Կուրամ հենքով արդիականացման ճանապարհային քարտեզի ընդհանրական մշակում:

Բացահայտման փուլի աշխատանքներն իրականացնելու նպատակով Հիմնադրամի աշխատակիցներն աշխատանքային քննարկումներ են ունեցել ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու մասնագետների հետ, որոնց արդյունքում գույքագրվել են սոցիալական պաշտպանության ոլորտում առկա ծրագրերը, դրանց համապատասխան բիզնես-գործընթացները և դրանց ավտոմատացման գործընթացում կիրառված տեխնիկական լուծումները, որը նախնական փաստաթղթի տեսքով ներկայացվել է Այ Բի Էմ ընկերությանը:

27.02.2017-10.03.2017թթ. ժամանակահատվածում Այ Բի Էմ ընկերության բրիտանական և ռուսական մասնաճյուղերի ներկայացուցիչներն այցելել են Հայաստան, Հիմնադրամի կողմից ներկայացված փաստաթղթի հիման վրա ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտի առկա իրավիճակի և նախատեսվող զարգացումների վերաբերյալ աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ ունեցել ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու մասնագետների, ոլորտի ՏՀՏ ենթակառուցվածքը սպասարկող Հիմնադրամի համապատասխան տեխնիկական անձնակազմի հետ: Աշխատանքային հանդիպումների և քննարկումների արդյունքում անհրաժեշտ նյութերի, մեթոդական ցուցումների և պարզաբանումների տրամադրմամբ Այ Բի Էմ ընկերության մասնագետների համար հստակեցվել է Զբաղվածության ոլորտում մատուցվող ծառայությունների բիզնես-գործընթացների տրամաբանությունը, դրանց ավտոմատացման սկզբունքները, տեխնիկական բնութագրիչները, ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտի քաղաքականության առանձնահատկությունները, ռազմավարությունը, գործող ծրագրերը, դրանց առնչվող բովանդակային և տեխնիկական խնդիրները և այլն: Ներկայումս Այ Բի Էմ ընկերության և Հիմնադրամի մասնագետների կողմից իրականացվում են հավաքագրված տեղեկատվության համակարգման աշխատանքներ, որոնց ավարտին նախատեսվում է ունենալ Զբաղվածության ոլորտում մատուցվող ծառայությունների՝ Այ Բի Էմ Կուրամ հենքով

մատուցման տեսլականի և ռազմավարության փաստաթուղթ, ինչպես նաև Սոցիալական պաշտպանության ոլորտի մյուս բոլոր տեղեկատվական համակարգերի՝ Այ Բի Էմ Կուրամ հենքով արդիականացման ճանապարհային ընդհանրական քարտեզ:

2017թ. ապրիլի 26-27-ը տեղի է ունեցել Այ Բի Էմ ընկերության ներկայացուցիչների երկրորդ այցելությունը Հայաստան, որի ընթացքում իրականացվել են Այ Բի Էմ Կուրամ ծառայությունների մատուցման համար Տարածաշրջանային տեխնոլոգիական կենտրոնի (SSԿ) հիմնման նախնական աշխատանքներ:

Բացահայտման փուլի աշխատանքների ամփոփման նպատակով նախնական պայմանավորվածության համաձայն 2017թ. հուլիսի 18-19-ը նախատեսվում է Այ Բի Էմ ընկերության ներկայացուցիչների երրորդ այցելությունը Հայաստան, որի ընթացքում ընկերության կողմից սոցիալական պաշտպանության ոլորտի միասնական տեղեկատվական համակարգի նախագծման, մշակման և ներդրման նպատակով պետք է ներկայացվեն հետևյալ արդյունքները՝

1. զբաղվածության ծառայությունների Կուրամ առաջարկի փաստաթուղթ,
2. նախագծի ռազմավարության և տեսլականի փաստաթուղթ,
3. տարածաշրջանային տեխնոլոգիական կենտրոնի փաստաթուղթ (աշխատակազմ/թիմային պրոֆիլներ և հմտությունների ճանապարհային քարտեզ):

Միջոցառում 39.

Մշակել բազմազավակ ընտանիքներին տրամադրվող սոցիալական երաշխիքներն ամրագրող հիմնարար իրավական ակտ

Հաշվետվություն

Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 83 և 86-րդ հոդվածները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2016թ. մարտի 10-ի N 245-Ա որոշման հավելվածի 21-րդ և ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 12-ի N 122-Ն որոշման (ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության ծրագրի) N 1 հավելվածի 127-րդ կետերը՝ մշակվել է «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Նախագծի նպատակն է՝ կարգավորել բազմազավակ ընտանիքների աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանել բազմազավակ ընտանիք հասկացությունը, բավարարել բազմազավակ ընտանիքների հիմնական պահանջմունքները, նպաստել բազմազավակ ընտանիքների ինքնապահովմանն ու ծագած

հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը, կանխարգելել նրանց սոցիալական մեկուսացումը և բարելավել ժողովրդագրական իրավիճակը:

Նախագիծը քննարկվել է նախարարությունում, ամբողջացվել են շահագրգիռ ստորաբաժանումների առաջարկությունները: Ներկա պահին նախապատրաստվում է նախագծի տրամադրումը համապատասխան պետական մարմիններին: Նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվելու հոկտեմբերի առաջին տասնօրյակում:

Միջոցառում 41.

Կատարելագործել ընտանիքի անապահովության գնահատման մեթոդաբանությունը, մշակել ընտանիքի անապահովության գնահատման օբյեկտիվ և համակողմանի չափորոշիչներ

Հաշվետվություն

ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «ՀՀ կառավարության 2014թ. հունվարի 30-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով էական փոփոխություններ են առաջարկվում ընտանիքների անապահովության գնահատման կարգում (այսուհետ՝ Կարգ):

Կարգի փոփոխությունների նպատակներից մեկը՝ աղքատ ճանաչված ընտանիքի աշխատունակ տարիքի տնտեսապես ակտիվ անդամի աշխատանքի շուկայում վարքագիծը գնահատելու հնարավորության ստեղծումն է՝ ֆորմալ աշխատանք ունենալու մոտիվացիայի մեծացումը, ծրագրի հասցեականությունն առնվազն նույն մակարդակում պահելու պայմանով: Այս մոտեցման կիրառումը ենթադրում է, որ նվազեցնելու է կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների աշխատանքի ապախթանիչ ազդեցությունը:

Առաջարկությունը մշակվել է այն մոտեցմամբ, որ ընտանիքի անապահովության միավորի վրա Կարգում արվող փոփոխությունների ազդեցությունը լինի հնարավորինս չափավոր՝ խուսափելով հնարավոր սոցիալական լարվածությունից, պահպանելով ծրագրի հասցեականությունը՝ ստեղծելով հավասարակշռություն անապահովության գնահատման և աշխատանքի մոտիվացիայի նպատակների միջև: Աշխատանքի շուկայում վարքագիծը գնահատելու համար առաջարկվել է տնտեսապես ակտիվ անձանց համար սահմանել չորս խումբ՝ չաշխատող անձ, աշխատանք փնտրող և գործազուրկ կարգավիճակ ունեցող անձ, աշխատող անձ (երեխա խնամող մայր) և առանձին խմբի գործազուրկ (աշխատանքի շուկայում անմրցունակ) անձ:

Երեխա ունեցող ընտանիքների անապահովության գնահատման հարցում երեխաների առկայության հանգամանքի կշիռն է մեծացվում՝ դիտարկելով նման ընտանիքներին՝ աղքատության տեսանկյունից ավելի ռիսկային: Միաժամանակ, հաշվի առնելով, որ «երեխայի սոցիալական խումբը ժամկետով է ամրագրվում և այն փոխվում է մեկ օրվա դրությամբ՝ 18 տարեկանը լրանալու օրը, ապա կտրուկ անցումը՝ երեխայից աշխատունակ չափահաս տնտեսապես ակտիվ քաղաքացու, հնարավորինս մեղմելու, ինչպես նաև նրան կյանքում կողմնորոշվելու՝ ուսում կամ աշխատանք, հնարավորություն տալու նպատակով սահմանվում է նոր սոցիալական խումբ, «չափահաս անձ՝ մինչև 19 տարեկան»:

Պահպանվում է նպաստառու ընտանիքների կազմում երեխա ունեցող ընտանիքների բարձր տեսակարար կշիռը (2014թ.-ից՝ իրական ընտանեկան նպաստ), ինչը համահունչ է պետության որդեգրած քաղաքականությանը՝ սոցիալական աջակցություն տրամադրելիս երեխաների առաջնահերթության սկզբունքին: ՀՀ ԱՎԾ 2015թ.-ի տվյալներով մանկական աղքատության մակարդակն ավելի բարձր է, քան աղքատության մակարդակը և նպատակ ունենալով մեծացնել Կարգի հասցեականությունը, ինչպես նաև նպաստներն ուղղորդել դեպի երեխա ունեցող ընտանիքներին, Կարգը լրացվել է նոր գործակցով:

Շատ աղքատ բնակչության ներկայացվածությունը համակարգում պայմանավորված է նաև շատ աղքատ բնակչության պասիվությամբ: Կարևորվում են այդ ընտանիքների հայտնաբերման և համակարգում հաշվառելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները, ինչպես բնակչության իրազեկման մակարդակի բարձրացումը, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավման ակտիվացումը: Վերջինս սոցիալական աջակցության հասցեականության բարձրացման գործում կարող է այս խնդրի լուծման հարցում էական ազդեցություն ունենալ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք ավելի մոտ են գտնվում քաղաքացիներին:

Միաժամանակ, պաշտոնական շրջանառության մեջ է դրվել ««Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագիծ): Նախագիծով առաջարկվում է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 9-12-րդ հոդվածներով սահմանված՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգի, դրանում հաշվառվելու, ընտանիքների

անապահովության գնահատման կարգի, ընտանիքի անապահովության միավորի որոշման, ինչպես նաև ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական շտեմարանների հետ կապված հարաբերությունները կարգավորվող դրույթները տեղափոխել «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, որպես ընտանիքի սոցիալական գնահատման համակարգ, նախատեսելով աղքատ ընտանիքներին տրամադրվող՝ կենսամակարդակի բարձրացմանն օժանդակող կամ դրավատթարացումը կանխող նպաստները, որպես սոցիալական ծառայություններից միայն մեկը:

Ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի միջոցով գնահատական կտրվի ընտանիքի թե անապահովության, թե բարեկեցության ու բարօրության վիճակին՝ առաջին դեպքում նախատեսելով սոցիալական ծառայությունների համապատասխան փաթեթի տրամադրում, այդ թվում նաև նպաստ, իսկ երկրորդ դեպքում խնամատար ընտանիքի, խնամակալի ընտրության, ինչպես նաև երեխա որդեգրել ցանկացող ընտանիք հաշվառելու հնարավորություն:

Ընտանիքի սոցիալական գնահատման համակարգը կդառնա սոցիալական դեպքի վարման հիմքը, որի արդյունքում կգնահատվի ընտանիքի կենսամակարդակը՝ քանակական և որակական ցուցանիշներով, ինչպես աղքատությունը, այնպես էլ բարեկեցությունը:

Առաջարկվող Նախագծով գնահատվում է նաև ընտանիքի ռեսուրսները՝ թե՞ գույքային և թե՞ ոչ գույքային, որով կարևորվում է մարդն իր անհատական ներուժով, ստեղծելով նախադրյալներ մարդկային կապիտալի զարգացման համար:

Նախագիծը հնարավորություն կտա մեծացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքին սոցիալական աջակցության տրամադրման հասցեականությունը, իրականացվող ծրագրերի ծախսարդյունավետությունը:

Միջոցառում 44.

Բարելավել մինչև երկու տարեկան երեխայի խնամքի տրամադրման, ինչպես նաև երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան միանվագ պետական նպաստների վարչարարությունը

Հաշվետվություն

Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան միանվագ պետական նպաստների վարչարարությունը բարելավելու նպատակով ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել՝

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ՀՀ կառավարության աշխատակազմ է ուղարկվել 09.06.2017թ. թիվ ԱԱ/ԱնԳ-1-5/6160-17 գրությամբ):

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ՀՀ կառավարության աշխատակազմ է ուղարկվել 15.06.2017թ. N ԱԱ/ԱնԳ-1-3/6341-17 գրությամբ):

Նախագծերով կարգավորվում են երրորդ և հաջորդ երեխայի ծնվելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստը և խնամքի նպաստը առցանց ներկայացված տվյալների հիման վրա նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները (ներառյալ՝ ԲԿԱԳ-ի հետ տեղեկատվության փոխանակության պայմաններն ու կարգը):

Միջոցառում 58.

Գործատուին տրամադրել պետական աջակցություն զբաղվածության կարգավորման պետական ծրագրերով աշխատաշուկայում անմրցունակ և հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում

Հաշվետվություն

Կայուն զբաղվածություն ապահովող պետական ծրագրերին գործատուների շահագրգիռ ներգրավվածությունը խթանելու և գործատուների մասնակցության շրջանակը մեծացնելու նպատակով, ՀՀ կառավարության 2017թ. մարտի 30-ի N339-Ն որոշման 6-րդ կետով փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման 8-րդ հավելվածով հաստատված «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրման կարգում» ըստ որի՝ սահմանվել և գործարկվել են գործատուներին միանվագ փոխհատուցման (պետական սուբսիդիայի) տրամադրման նոր ընթացակարգ, մասնավորապես՝

1. գործատուներին միանվագ փոխհատուցման չափերը սահմանվել են ըստ աշխատաշուկայում անմրցունակ անձանց կատեգորիաների,

2. հստակեցվել են պետություն-գործատու-անմրցունակ անձ եռակողմ պայմանագրերը և դրանց ժամկետները,

3. սահմանվել են միանվագ փոխհատուցման տրամադրման համար առաջնահերթությունները՝ ըստ շահառուների կատեգորիաների:

2017թ. հուլիսի 1-ի դրությամբ «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում» ծրագրում ընդգրկվել են թվով 510 աշխատաշուկայում անմրցունակ անձինք, որից 15-ը՝ հաշմանդամություն ունեցող անձինք:

Միջոցառում 60.

Բարելավել բժշկասոցիալական փորձաքննության գործընթացը՝ նոր համակարգի ձևավորմամբ, որը կապահովի հաշմանդամության հստակ սահմանում՝ հիվանդությունը հաշմանդամությունից տարանջատող չափորոշիչների առկայությամբ

Հաշվետվություն

Մշակվել և 2017թ. մարտի 30-ի ԱԱ/ԱԿ-2-2/3443-17 գրությամբ ՀՀ կառավարություն են ներկայացվել ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարություն 2006 թվականի մարտի 2-ի N 276-ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին», «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Վերականգնողական անհատական ծրագրերը կազմելու և իրականացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1535-ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշումների նախագծերը: Նախագծերով նախատեսվում է բժշկասոցիալական փորձաքննության գործընթացում փաստաթղթային եղանակով փորձաքննության մեխանիզմների մշակում և ներդնում՝ նվազեցնելով փորձաքննության համար դիմող անձի և որոշում կայացնողի անմիջական շփումը: Ինչպես նաև վերանայվում է հաշմանդամության գնահատման համակարգը՝ ներդնելով նոր մոդել հիմնված Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա, որով նախատեսվում է իրականացնել անձի կարողությունների և կարիքների բազմակողմանի

գնահատում առավել հստակ և օբյեկտիվ չափարոշիչներով և տրամադրել վերականգնողական ծառայություններ գնահատված կարիքին համապատասխան:

2017թ. մարտի 31-ի N 55-Ա/1 հրամանով հաստատվել է «Բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող չափորոշիչների կիրարկման՝ հաշմանդամության հանգեցնող հիմանդությունների և ախտաբանական վիճակների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը», որով լրամշակվել և հստակեցվել է գործող՝ հաշմանդամության սահմանման չափորոշիչների կիրառման մեթոդական ուղեցույցը, սահմանագծելով հիվանդ և հաշմանդամություն հասկացությունները:

Միջոցառում 63.

Մշակել հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող տարբեր մասնագիտացումներով համապատասխան մասնագետներ պատրաստելու ծրագիր

Հաշվետվություն

Ծրագրի գործողության իրականացման ժամկետը սահմանվել է 2018թ.-ի երրորդ եռամսյակ, դեռևս այդ ուղղությամբ իրականացված աշխատանքներ չկան:

Միջոցառում 64.

Ընդլայնել հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող համայնքային կենտրոնների ցանկը

Հաշվետվություն

Հաշմանդամություն ունեցող երեխաներին ցերեկային կենտրոնում սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով պետական աջակցություն է ցուցաբերվում «Փրկություն» և «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպություններին: Ի լրումն գործող ծրագրերի՝ 2017թ-ից աուտիզմ ունեցող դեռահասներին և երիտասարդներին զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրման նպատակով, ծառայություն է պատվիրակվել նաև «Իմ ուղին» սոցիալ-աբիլիտացիոն ցերեկային կենտրոնին:

Կենտրոնի կողմից իրականացվում է աուտիզմ ունեցող դեռահասների և երիտասարդների սպասարկում՝ խնամք, առօրյա զբաղվածություն, սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրում՝ ապահովելով նրանց, մասնագիտական կողմնորոշումը, ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը և սոցիալական ներառումը:

Միջոցառում 65.

Ներդնել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրման այլընտրանքային մոդելներ

Հաշվետվություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Բաց հասարակության հիմնադրամներ (այսուհետ՝ ԲՀՀ) - Հայաստան կազմակերպության միջև 2014թ. կնքված համագործակցության հուշագրի շրջանակում ԲՀՀ-ի աջակցությամբ 2016թ. մայիսին ստեղծվեց Սպիտակի խնամքի տունը՝ նախատեսված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 16 անձի շուրջօրյա խնամքի համար: Ի դեպ, մինչև նշված խնամքի տան ստեղծումը, նախարարությունը և ԲՀՀ-ն իրականացրել են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարիքների ուսումնասիրություն և գնահատում, համատեղ մշակվել են մի քանի իրավական ակտեր և այլընտրանքային ծառայությունների մոդելներ:

Սպիտակի խնամքի տան ֆինանսավորումը ԲՀՀ-ի կողմից իրականացվելու է մինչև 2017թ. ավարտը, իսկ 2018թ. հունվարից նախատեսվում է պետական աջակցության ցուցաբերում, այլապես խնամքի տան գոյությունը կվտանգվի: Եվ ելնելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի այլընտրանքային ծառայություններ տրամադրելու անհրաժեշտությունից ու կարևորությունից՝ նախարարությունը ՀՀ 2018-2020 թթ. ՄԺԾ հայտի նախագծում ներառել է Սպիտակի խնամքի տանը պետական աջակցություն ցուցաբերելու մասին նոր նախաձեռնությունը:

Սպիտակի խնամքի տունը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի այլընտրանքային ծառայությունների տրամադրման նոր մոդել է և առաջինն է Հայաստանում, որն ուղղված է անձի սոցիալականացման գործընթացի և համայնքային կյանքին մասնակցության ապահովմանը:

Նման ծրագրի իրականացում կամ նմանատիպ կենտրոնների և տների կարողությունների զարգացում նախատեսված է նաև ՀՀ կառավարության 2013թ. սեպտեմբերի 13-ի N 36 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թվականների ծրագրով» (ինչը ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով չի իրականացվել), ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N20 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության

ռազմավարության և ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագրում: Մանավորապես, նախատեսված է մինչև 2019թ. առաջին կիսամյակի ավարտը Երևանում ստեղծել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեցների համար շուրջօրյա խնամքի մասնագիտացված տուն:

Միջոցառում 66.

ՀՀ-ում տարեցների սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխման շրջանակներում սահմանել տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող խնամքի և սոցիալական ծառայությունների նոր մոդելներ, ինչպես նաև խնամքի ծառայությունների՝ վճարովի և համավճարի սկզբունքով մատուցման մեխանիզմներ

Հաշվետվություն

Դեռևս 2016թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2016թ. հոկտեմբերի 27-ին ընդունվել է «Պետության կողմից երաշխավորված՝ պետական մարմինների ենթակայության ներքո գտնվող սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից անվճար տրամադրվող սոցիալական ծառայությունների ու սոցիալական աջակցության վճարովի ծառայությունների ցանկերը և սոցիալական աջակցության վճարովի ծառայությունների տրամադրման սոցիալական աջակցության վճարովի ծառայություններից ձևավորված ֆինանսական միջոցներից սոցիալական աջակցության ֆինանսավորման դեպքերն ու կարգը սահմանելու մասին» N1112-Ն որոշումը:

Նույն որոշմամբ հանձնարարվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին մինչև 2017թ. դեկտեմբերի 5-ը ՀՀ կառավարություն ներկայացնել առաջարկություն սոցիալական աջակցության համավճարով ծառայությունների տրամադրման մեխանիզմների ներդրման մասին՝ ելնելով սոցիալական աջակցության վճարովի ծառայությունների տրամադրման վերաբերյալ վիճակագրական տվյալներից:

Քանի որ վերը նշված որոշման համաձայն՝ սոցիալական աջակցության ծառայությունները տրամադրվում են վճարովի հիմունքներով՝ օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով ձեռնարկատիրական գործունեության իրականացման շրջանակներում, իսկ նախարարության ենթակայության տարեցների խնամքի հաստատությունների կանոնադրություններում և դրանց հիմնադրման մասին կառավարության որոշումներում ամրագրված չի եղել վճարովի կամ համավճարի սկզբունքով ծառայությունների

մատուցումը, ներկա դրությամբ նշված իրավական ակտերում կատարվում են փոփոխություններ, ինչը կապահովի վճարովի ծառայությունների տրամադրման իրավական հիմքերը (իրավական ակտերի նախագծերն առաջիկայում կներկայացվեն ՀՀ կառավարություն):

Ելնելով վերոգրյալից, և համաձայն ՀՀ կառավարության 2016թ. հոկտեմբերի 27-ի N1112-Ն որոշման 2-րդ կետով տրված հանձնարարականի, անհրաժեշտ է տարեցների շուրջօրյա խնամքի հաստատություններում, տնային պայմաններում, ինչպես նաև ցերեկային կենտրոններում վճարովի և համավճարի սկզբունքով ծառայությունների տրամադրման համար ստեղծել իրավական հիմքեր: Աշխատանքներն ընթացքի մեջ են և կավարտվեն տարեվերջին:

Միաժամանակ, ՀՀ կառավարության գործունեության 2017թ. ծրագրով (4-րդ գլուխ, 4.2 բաժին, կետ 4.1) նույնպես նախատեսված է նույնաբովանդակ միջոցառում՝ «մինչև 2018 թվականի ավարտը սահմանել տարեցների խնամքի գործող պետական և ոչ պետական հաստատություններում ծառայությունների տեսականին ու որակը բարելավելու նպատակով՝ ծառայությունների վճարովի և համավճարի սկզբունքով տրամադրման մեխանիզմները, ինչպես նաև իրականացնել խնամքի ծառայությունների պատվիրակում՝ մրցակցային սկզբունքով.»:

Միջոցառում 67.

Մշակել ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիր

Հաշվետվություն

«ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի» նախագիծը մշակվել և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն ս.թ. հունիսի 1-ին: Հունիսի 22-ին նախագիծը քննարկվել է մշտապես գործող սոցիալական կոմիտեի նիստին, որի N 14.10/ [411207]-17 արձանագրության 1-ին կետի համաձայն որոշվել է հետաձգել հարցի քննարկումը՝ ՀՀ Նախագահի աշխատակազմի և ՀՀ փաստաբանների պալատի հետ քննարկելու և համաձայնեցնելու համար:

Ներկայում, ի կատարումն ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 27-ի N 02/14.10/[411207]-17 հանձնարարականի, նախագիծը ներկայացվել է ՀՀ փաստաբանների պալատ և ՀՀ Նախագահի աշխատակազմ:

Միջոցառում 68.

Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մշտադիտարկման և գնահատման մեխանիզմի ներդրում/կարգ

Միջոցառում 70.

Փոփոխություններ կատարել «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերում

Հաշվետվություն

Նախագծի մշակման աշխատանքները մեկնարկել են:

Միջոցառում 71.

Մշակել ընտանեկան բռնության ենթարկված անձանց ուղղորդման մեխանիզմ

Հաշվետվություն

Ծրագրի գործողության իրականացման ժամկետը սահմանվել է 2018թ.-ի երրորդ եռամսյակ, դեռևս այդ ուղղությամբ իրականացված աշխատանքներ չկան:

Միջոցառում 72.

Սահմանել ընտանեկան բռնության ենթարկված անձանց տրամադրվող համալիր ծառայությունների տրամադրման և գնահատման չափանիշներ, այդ ծառայությունների բովանդակության, ծավալի, պայմանների, որակի և անվտանգության վերաբերյալ պահանջների նկատմամբ միասնական մոտեցման ապահովման համար

Հաշվետվություն

Ծրագրի գործողության իրականացման ժամկետը սահմանվել է 2018թ.-ի չորրորդ եռամսյակ, դեռևս այդ ուղղությամբ իրականացված աշխատանքներ չկան:

Միջոցառում 73.

Հայաստանում պետության կողմից ֆինանսավորվող աջակցության կենտրոնների հիմնում

Հաշվետվություն

Կենտրոնները նախատեսվում է ստեղծել երեխաների խնամքի հաստատությունների վերակազմավորման արդյունքում: Գործընթացը սկսվել է: Ներկայում գործում է մեկ աջակցության կենտրոն՝ Նուբարաշենում:

84. «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպել դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներին և ընտանիքներին բազմագործառույթ ծառայություններ տրամադրող աջակցության կենտրոնների»

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» թիվ 122-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 112-րդ կետի՝ 20.03.2017թ. N ԱԱ/ԳԳ-2-5/2929-17 ելից գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1906-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Նախագիծը ՀՀ Վարչապետի 12.04.2017թ. N 02/14.12/9020-17 հանձնարարականի համաձայն հետ է ուղարկվել լրամշակելու և ՀՀ վարչապետի որոշման տեսքով ծրագիր ժամանակացույց ներկայացնելու պահանջով: «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի երեխաների շուրջօրյա հաստատությունների վերակազմավորման վերաբերյալ միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը լրամշակվել է և 31.05.2017թ. N ԱԱ/ԳԳ-2-4/5781-17 ելից գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:

Միջոցառում 85.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների (երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն) վերակազմակերպում երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների:

Հաշվետվություն

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 12-ի N 122-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 119-րդ կետի՝ 21.06.2017թ. N ԱԱ/ԳԳ-2-4/6553-17 ելից գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին», «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» հիմնադրամի վերակազմավորելու, գույք տրամադրելու, «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1906-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» հիմնադրամի վերակազմավորելու, գույք տրամադրելու մասին» և «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն», «Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները լուծարելու և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 890-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերը:

Միջոցառում 86.

«Դասակարգել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում մատուցվող (մասնագիտացված մանկատներ) ծառայությունները»

Հաշվետվություն

Մշակվել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հաստատմանն է ներկայացվել «Ըստ ֆունկցիոնալ անկախության, մասնագիտացված մանկատներում խնամվող երեխաների կարիքների դասակարգման մեթոդաբանությունը հաստատելու մասին» հրամանի նախագիծը:

Միջոցառում 87.

Իրականացնել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում տրամադրվող ծառայությունների համապատասխան աշխատողների վերապատրաստման, վերատրակավորման միջոցառումներ

Հաշվետվություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից 2017թ. առաջին կիսամյակում իրականացվել են «Հաշմանդամ երեխաների սոցիալական ներառումը», «Անչափահասների շրջանում մուրացկանության և թափառաշրջիկության հիմնախնդիրները» թեմաներով վերապատրաստումներ: Վերապատրաստվել են 130 ունկնդիր: Վերապատրաստումներում ընդգրվել են Գյումրու թիվ 1 և թիվ 2 երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների, Գյումրու «Երեխաների տուն» մանկատան, Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոնի, «Գյումրի քաղաքի երեխաների ցերեկային հոգաձության» կենտրոնի, «Առավոտ» հասարակական կազմակերպության, «Հայ ծնողազուրկ երեխաների օգնության միություն» բարեգործական հիմնադրամի աշխատակիցները:

Միջոցառում 88.

Ապահովել առանց ծնողական խնամքի մնացած երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքը, բարձրացնել հաստատությունների բեռնաթափման և խնամատար ընտանիքների ներդրման գործընթացի արդյունավետությունը

Հաշվետվություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների (երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների) վերակազմավորման գործընթացի արդյունքում՝ ՀՀ մարզերի շուրջօրյա խնամքի կարիք ունեցող երեխաների հետագա խնամքը կկազմակերպվի շուրջօրյա խնամք տրամադրող ընտանեկան տիպի փոքր տներում, ինչպես նաև մարզերում կավելացվի խնամատար ընտանիքների թիվը:

Վանաձորի մանկատան, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների մի մասի նախատեսվող լուծարումից գոյացած դրամական միջոցներն ամբողջությամբ կհատկացվեն՝ մի շարք մարզերում խնամքի կարիք ունեցող երեխաների հետագա խնամքը կազմակերպելու նպատակով մարզում անհրաժեշտ թվով ընտանեկան

տիպի փոքր տների ստեղծմանը, մարզում խնամատար ընտանիքների թվի ավելացմանը, սոցիալական պաշտպանության շուրջօրյա հաստատություններից կենսաբանական կամ խնամակալի (հոգաբարձուի) ընտանիք վերադարձած երեխաների ընտանիքներին տրամադրվող նյութական աջակցության, ինչպես նաև նշված հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման ծրագրերին:

2018-2020թթ. ՀՀ Միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսվում է յուրաքանչյուր տարի 50 երեխայի խնամքն ու դաստիարակությունը կազմակերպել խնամատար ընտանիքներում:

ՀՀ կառավարության և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության միջև 2013թ. սեպտեմբերի 27-ին կնքված օժանդակության համաձայնագրի համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում «ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համագործակցությամբ «Խոցելի երեխաների սոցիալական ներառում» ծրագրի շրջանակում իրականացնում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող երեխաների խնամքի կազմակերպումը խնամատար ընտանիքներում: Հիմնադրամի կողմից արդեն իսկ ընտրվել են մարզերի բնակիչ քաղաքացիներ, ովքեր պատրաստ են խնամատարության միջոցով իրականացնել առանց ծնողական խնամքի մնացած, ինչպես նաև բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող այնպիսի երեխաների խնամքը, որոնց ծնողները խուսափում են իրենց երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրականացնել կենսաբանական ընտանիքում: Խնամատարության ծրագրում ընդգրկվելու համար դիմել է շուրջ 100 ընտանիք: Խնամատար ծնող է գրանցվել հանրապետության 20 համայնքից 70 թեկնածու, որոնք անցել են խնամատարության թեմայով դասընթացներ և սոցիալական դեպք վարողների հետ համատեղ իրականացված գնահատման հիման վրա ստացել դրական եզրակացություններ:

Միջոցառում 89.

Բարելավել որդեգրման գործընթացի կանոնակարգումը, ապահովել որդեգրման գործընթացի թափանցիկությունը, ներդնել որդեգրման ենթակա երեխաների անձնական (սահմանափակ) տվյալները, որդեգրել ցանկացող անձանց տրամադրելու մեխանիզմները

Հաշվետվություն

Երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 269-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Փոփոխությունների և լրացումների նպատակը ՀՀ օրենսդրության համապատասխանեցումն է «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի կոնվենցիային, երեխայի իրավունքների պաշտպանության համակարգում իրականացվող բարեփոխումներին, ինչպես նաև ՀՀ կառավարության 2013թ. փետրվարի 26-ի թիվ 01/14.10/[146501]-13 հանձնարարականով նախատեսված որդեգրման գործընթացում կոռուպցիոն ռիսկերի բացառմանն ուղղված քայլերին: ՀՀ կառավարությունից ետ է ուղարկվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 269-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 06.09.2016թ. N ԱԱ/ԱՌՊ1/8244-16 գրությունը: Հանձնարարվել է հիմք ընդունել ՀՀ վարչապետի N 02/14.12/20323-15 հանձնարարականը, համաձայն որի՝ նախագիծը ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացվի «ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո:

Վերոնշյալ նախագիծը ՀՀ արդարադատության նախարարությունից ՀՀ կառավարություն է ներկայացվել ս/թ հունիսի 02-ին:

Ըստ գործող ընթացակարգերի՝ հաշվառված որդեգրել ցանկացող անձինք իրենց նախաձեռնությամբ կարող են այցելել մանկատներ և ընտրել որդեգրման ենթակա երեխա: Ավելի վաղ հաշվառված որդեգրել ցանկացող անձինք որպեսզի ունենան որդեգրելու հնարավորության առաջնահերթություն նոր հաշվառվածների համեմատությամբ, ինչպես նաև պահպանվի սոցիալական արդարությունը, և որդեգրել ցանկացող անձանց մատուցվի առավել որակյալ ծառայություն, առաջարկություն է ներկայացվել ՀՀ-ում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիներին ծածկագիր տրամադրելու վերաբերյալ, ինչը հնարավորություն կտա որդեգրման ենթակա երեխաների տեղեկատվական շտեմարան առ ցանց մուտք գործել և քաղաքացու նախընտրելի չափանիշներին համապատասխանող

երեխայի սահմանափակ անձնական տվյալներին /անուն, ծննդյան թիվ, առողջության մասին տվյալներ, սեռ և գտնվելու վայր/ ծանոթանալ:

Եթե երեխա որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացին չի ցանկանում ստանալ ծածկագիր և առցանց հասանելիություն երեխաների սահմանափակ անձնական տվյալներին, ապա նա կարող է դիմել իր բնակության վայրի աշխատակազմ՝ իր նախընտրելի չափանիշներով որդեգրման ենթակա երեխաների անձնական գործերին ծանոթանալու համար:

Մանկատներում որդեգրել ցանկացող անձանց և որդեգրման ենթակա երեխաների հանդիպման գործընթացը կանոնակարգելու նպատակով առաջարկություն է ներկայացվել նախագծում ներառել գրանցամատյան վարելու վերաբերյալ դրույթ՝ հաստատություն այցելած որդեգրել ցանկացող անձի և որդեգրման ենթակա երեխայի տեսակցությունը գրանցելու համար (երեխայի անուն, ազգանուն, սեռ, տարիք, տեսակցելու օր, ամիս, տարեթիվ, տեսակցության տևողությունը (սկիզբը և ավարտը), երեխայի հետ հանդիպման եկած որդեգրել

ցանկացող անձի ստորագրությամբ հաստատված գրառումը երեխային հանդիպելու /տեսակցելու/ վերաբերյալ):

Նախարարության կողմից 2015թ. նոյեմբերի 11-ի N ԱԳ/ԳԳ-2/10123-15 ելից գրությամբ «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին է ներկայացվել տեխնիկական ծրագրային առաջարկ, որի համաձայն՝ փոփոխություն է կատարվել որդեգրման տեղեկատվական համակարգում: Նախագծի ընդունման դեպքում ՀՀ-ում բնակվող ՀՀ քաղաքացիների համար հատուկ ծածկագրի տրամադրմամբ կստեղծվի հնարավորություն տեսնելու կենտրոնացված հաշվառման վերցված որդեգրման ենթակա երեխաների վերաբերյալ սահմանափակ տվյալներ՝ անունը, սեռը, ծննդյան օրը, ամիսը և տարեթիվը, ընդհանուր տեղեկատվություն առողջական վիճակի մասին, երեխայի լուսանկարը՝ մինչև հինգ տարեկան երեխայի դեպքում:

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Միջոցառում 52.

Երաշխավորել գիտական անկախությունը, անաչառությունը, անկախ հետազոտական մտքի զարգացումն ու գիտական հետազոտական համակարգերի անկողմնակալությունը՝ բարձրագույն կրթության համակարգում

Հաշվետվություն

Գիտական թեմաների/ծրագրերի ընտրության ու ֆինանսավորման երաշխավորելու անկախությունն ու անաչառությունն ապահովելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե) գիտական թեմաների/ծրագրերի ընտրությունն իրականացնում է մրցութային կարգով՝ անկախ փորձագիտական համակարգի միջոցով, մասնավորապես՝

1) Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային և նպատակային ծրագրերի նախագծերը քննարկելու նպատակով յուրաքանչյուր տարի ՀՀ ԿԳ նախարարի հրամանով ստեղծվում է միջգերատեսչական հանձնաժողով, որի քննարկումների արդյունքում ներկայացվում են առաջարկություններ՝ նախագծերը հաջորդ տարվա ՀՀ պետական բյուջեում ընդգրկելու վերաբերյալ:

2) Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով մրցույթին ներկայացված գիտական հայտերը տրամադրվում են մասնագիտական փորձագիտական խորհուրդներին՝ կոմիտեի փորձագետների շտեմարանում ընդգրկված փորձագետների ներգրավմամբ գիտական փորձաքննություն իրականացնելու համար (հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում երկու անկախ փորձագետների կողմից):

Միջոցառում 83.

Ուսումնասիրություն կատարել ազգային փոքրամասնությունների լեզուներով դասավանդող ուսուցիչների, մանկավարժական անձնակազմի և կրթական նոր ծրագրերի կարիքների և հնարավորությունների վերաբերյալ

Հաշվետվություն

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից շրջաբերական է ուղարկվել Երևանի քաղաքապետարան և ՀՀ մարզպետարաններ՝ ազգային փոքրամասնությունների

լեզուներով դասավանդող ուսուցիչների, մանկավարժական անձնակազմի և կրթական նոր ծրագրերի կարիքների և հնարավորությունների վերաբերյալ մեկամսյա ժամկետում առաջարկներ ներկայացնելու մասին:

3. Ծնողների և ուսուցիչների շրջանում ներառական կրթության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով (ծրագրի 91-րդ կետ) ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ իրականացվող՝ «Խոցելի երեխաների սոցիալական ներառում. Երեխայի խնամքի համակարգի բարեփոխման շրջանակներում այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է վերապատրաստողների վերապատրաստում Լոռու մարզի 162 դպրոցների տնօրենների համար՝ «Ներառական կրթություն, կրթություն բոլորի համար թեմայով»: Ինչպես նաև վերապատրաստվել են 2012 ուսուցիչներ՝ «Ներառական կրթություն, կրթություն բոլորի համար» թեմայով, 30 ժամ տեսական և 30 ժամ գործնական մոդուլային ուսուցման դասընթացով: Համապատասխան վերապատրաստում են անցել նաև 2397 ծնողներ:

«Հույսի կամուրջ» ՀԿ-ի աջակցությամբ «Միասին ապրել, միասին սովորել» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է վերապատրաստողների վերապատրաստում Տավուշի մարզի 81 դպրոցների տնօրենների համար՝ «Ներառական կրթություն, կրթություն բոլորի համար թեմայով»: Նաև վերապատրաստվել են Տավուշի մարզի 81 դպրոցների 2044 ուսուցիչներ և մանկավարժահոգեբանական թիմերի 215 մասնագետներ՝ «Ներառական կրթություն, կրթություն բոլորի համար» թեմայով, 30 ժամ տեսական և 30 ժամ գործնական մոդուլային ուսուցման դասընթացով: Համապատասխան վերապատրաստում են անցել նաև 1764 ծնողներ:

Համապատասխան վերապատրաստում են անցել նաև «Հույսի Կամուրջ» ՀԿ-ի Տավուշի մարզի 4 գրասենյակների 52 մասնագետներ՝ «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման հմտություններ» թեմայով: Այնուհետև նշված մասնագետներն իրենց հերթին վերապատրաստել են Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժահոգեբանական թիմերին: Ներկայումս էլ նրանք աջակցում են հանրակրթական դպրոցներին՝ իրականացնելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ առաջին մակարդակի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումները:

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

Միջոցառում 42.

Հստակեցնել երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող ընտանիքներին տրամադրվող պետական աջակցության մոտեցումները և աջակցության տրամադրման գործընթացի հետ կապված հարցերը

Հաշվետվություն

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով ներկայումս պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շարունակական իրականացման և Գյումրի քաղաքում Ծրագրի ավարտի համար նախատեսվել է 560.0 մլն ՀՀ դրամ:

Նշված միջոցների հաշվին բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող ընտանիքներին տրամադրվող պետական աջակցության մոտեցումների և աջակցության տրամադրման գործընթացի հետ կապված հարցերի հստակցման նպատակով մշակվել է «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը 2017 թվականի մարտի 2-ին ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

Նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N449-Ն որոշմամբ, որի համաձայն վերը նշված միջոցների հաշվին նախատեսվել է.

- Գյումրի քաղաքում մոտ 90 ընտանիքի բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու նպատակով բնակարանի գնման վկայագրի (այսուհետ՝ Վկայագիր) միջոցով տրամադրել ֆինանսական աջակցություն, որով կավարտվի Գյումրի քաղաքում ձևավորված պարտավորությունների կատարումը (թիվը ներառում է նաև ամբողջական փաստաթղթային փաթեթներ ներկայացրած, սակայն շահառուների ճանաչման գործընթացի ժամանակ հանրապետությունից բացակայած ընտանիքներին),

- Սպիտակ քաղաքում 4-սենյականոց բնակարանի շահառու ճանաչված 1 ընտանիքի Վկայագրի միջոցով տրամադրել ֆինանսական աջակցություն,

- ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի գյուղական բնակավայրերում բնակապահովման իրավունքը դատական կարգով վերականգնած՝ մեկ սենյակի շահառու ճանաչված 3 ընտանիքի (Շիրակ-1, Լոռի-2) տրամադրել ուղղակի ֆինանսական աջակցություն՝ յուրաքանչյուրին 3.0 մլն ՀՀ դրամի չափով:

ՀՀ Շիրակի և Լոռու մարզպետարանների հետ ճշտված տեղեկատվության համաձայն հաշվետու ժամանակահատվածում Գյումրի քաղաքում Վկայագիր է տրամադրվել 82 ընտանիքի (21-ն արդեն իսկ ձեռք են բերել բնակարաններ), Սպիտակ քաղաքում 1 ընտանիքի տրամադրվել է Վկայագիր, ինչպես նաև մարզերի գյուղական բնակավայրերում մեկ սենյակի շահառու ճանաչված 3 ընտանիքի տրամադրվել է ուղղակի ֆինանսական աջակցություն՝ յուրաքանչյուրին 3 մլն ՀՀ դրամի չափով:

Միջոցառում 62.

Ստեղծել իրավական հիմքեր հանրային կիրառության հասարակական շենք-շինություններում, հանգստի գոտիներում հաշմանդամություն ունեցող անձանց հաշմանդամների տեղաշարժման մատչելիությունն ապահովելու նպատակով

Հաշվետվություն

Նախատեսվում է իրականացնել «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի վերանայում և արդիականացում» և «Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուի մշակում (տեղայնացում)» միջոցառումները, որոնք ներառված են ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 1 արձանագրային որոշման միջոցառումների ցանկում:

ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (տեղայնացում) ծրագրին հավանություն տալու մասին» N 8 նիստի արձանագրային որոշման շրջանակներում ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին «Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուի» մշակման (տեղայնացման)

աշխատանքի գնման գործընթացը ներկայումս գտնվում է գնման հայտի գնահատման փուլում:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 3-ի և 6-ի N02/16.10/4911-17 ու N02/16.10/4953-17 հանձնարարականների շրջանակներում ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի համապատասխան գրություններով (13.03.2017թ. N 01/14.1/1091-17 և 15.03.2017թ. N 01/14.1/1177-17) ՀՀ կառավարության աշխատակազմ և ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացվել հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի ու շինությունների մատչելիության ապահովման ուղղությամբ գործող անհրաժեշտ իրավական ակտերը՝ առաջարկելով հստակեցնել վերոնշյալ 62-րդ կետով նախատեսված միջոցառման ձևակերպումը:

ՀՀ բնապահպանության նախարարություն

Միջոցառում 55.

Մշակել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ

Հաշվետվություն

Կատարվում են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» նոր խմբագրությամբ օրենքի մշակման աշխատանքներ, մասնավորապես՝ մշակվել են մթնոլորտային օդի որակի գնահատման դրույթները /հասկացությունների մասով/:

Միջոցառում 56.

«Մշակել փոփոխություններ և լրացումներ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում

Հաշվետվություն

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների և լրացումների իրականացման աշխատանքներն ընթացքի մեջ են, նախագծային փոփոխությունները համապատասխանեցվում են Օրիուսի կոնվենցիայի համապատասխան կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ կայացրած որոշումներին, մասնավորապես, շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության ազատության, որոշումների ընդունարը հանրության արդյունավետ մասնակցության և դատական մատչելիության հարցերում:

Միջոցառում 57.

«Շրջակա միջավայրի օրենսդրությունը և ոլորտի քաղաքականությունը համապատասխանեցնել Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ կայացրած որոշումներին, մասնավորապես, շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության ազատության, որոշումների ընդունմանը հանրության արդյունավետ մասնակցության և դատական մատչելիության հարցերում»

Հաշվետվություն

Օրհուսի կոնվենցիայի կողմերի հանդիպման V/9A որոշմամբ և դրանից բխող Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի կողմից՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում հանրության կողմից դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու ժամկետները երկարաձգելու նպատակով ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 9-ի N 357-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ, համաձայն որի.

1. Հանրության կողմից դիտողությունների և առաջարկությունների ներկայացման ժամկետը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլերում հիմնադրույթային փաստաթղթի և նախատեսվող գործունեության Ա) կատեգորիայի դեպքում 52 աշխատանքային օրից դարձել է 66 աշխատանքային օր, Բ) կատեգորիայի դեպքում 37 աշխատանքային օրից դարձել է 51 աշխատանքային օր, իսկ Գ) կատեգորիայի դեպքում 17 աշխատանքային օրը 22 աշխատանքային օր:

2. Որոշմամբ հանրությանն իրավունք է վերապահվել ներկայացնել ցանկացած դիտողություն և առաջարկություն, որը նրա կարծիքով առնչվում է հիմնադրույթային փաստաթղթին և նախատեսվող գործունեությանը:

3. Վերացվել են հանրության կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի առնելու սահմանափակումները:

ՀՀ սփյուռքի նախարարություն

Միջոցառում 95.

Իրականացնել Սիրիայի փախստականների կրթական, մշակութային, սոցիալական, տնտեսական ինտեգրման խնդիրների լուծմանը նպաստող ծրագրեր

Հաշվետվություն

«Հայաստանի Հանրապետությունում սիրիահայերի և իրաքահայերի ինտեգրման գործընթացի արագացում» ծրագրի շրջանակում՝

2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում տեղի են ունեցել սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 3 նիստ, որտեղ քննարկվել են Սիրիայում և Իրաքում տիրող իրավիճակի և հայ համայնքների խնդիրների, սիրիահայերի բուժօգնության կազմակերպման ուղղությամբ կատարված աշխատանքների և հետագա անելիքների, սիրիահայ գործարարների վերապատաստման և նրանց բիզնեսի կայացմանն ուղղված ծրագրերի, ՀՀ քաղաքացիություն և կացության կարգավիճակ ստացած սիրիահայերի վերաբերյալ տեղեկատվությունը և ոլորտում առկա խնդիրների ու հետագա անելիքների մասին առաջարկները: Նիստերում զեկույցներով հանդես են ելել նաև Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչը և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ծրագրի ղեկավարը՝ սիրիահայերի հիմնախնդիրների լուծման ուղղությամբ կատարված աշխատանքների և սիրիահայերի տնտեսական ինտեգրման ուղղությամբ իրականացված և նախատեսված ծրագրերի մասին, ինչպես նաև տնտեսական ինտեգրման աշխատանքային խմբի գործունեության մասին:

«Հայաստանաբնակ կարիքավոր սիրիահայերի բժշկական աջակցություն» ծրագրի շրջանակում՝

«Իզմիրյան» բժշկական կենտրոնում մեկնարկել է «Հայաստանաբնակ կարիքավոր սիրիահայերի բժշկական աջակցություն» ծրագիրը, որի նպատակն է անվճար բժշկական օգնություն տրամադրել 2012 թվականից ի վեր սիրիական պատերազմի հետևանքով Հայաստանում բնակություն հաստատած կարիքավոր սիրիահայերին, որոնց անհրաժեշտ բժշկական օգնությունը ներառված չէ կամ մասնակիորեն է ներառված պետական պատվերի շրջանակներում: Նախարարությունը մասնակցել է ծրագիրն իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի բոլոր հանդիպումներին:

Նախարարության միջնորդությամբ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի, Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության և Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից 437 սիրիահայի տրամադրվել է ֆինանսական աջակցություն՝ բժշկական օգնություն ստանալու համար:

Բացի այդ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ում սիրիահայ կամավոր բժիշկների (մանկաբույժ, ակնաբույժ, մաշկաբան, թերապևտ) կողմից գործող շաբաթօրյա բժշկական անվճար «Դարմանատուն» ծառայությունից օգտվել է 650 սիրիահայ:

Սիրիահայերի տնտեսական ինտեգրման խնդիրների լուծման ծրագրի շրջանակում՝

Կազմակերպվել է «Հայաստանում ներդրումներին սփյուռքահայերի մասնակցությունը» և «Զբոսաշրջության զարգացումը Հայրենիքում և սփյուռքահայերի մասնակցությունը» կլոր սեղան - քննարկումներ: «Սփյուռքի զորակցությամբ» խորագրով կլոր սեղան-քննարկմանը մասնակցել են նաև սիրիահայ և իրաքահայ գործարարներ:

Նախարարությունը, որպես սիրիահայերի տնտեսական ինտեգրման հարցերով աշխատանքային խմբի անդամ և համակարգող, մասնակցել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) նախաձեռնությամբ իրականացված՝ Հայաստանում սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրման հարցերով աշխատանքային խմբի հանդիպմանը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ տեղի ունեցած՝ «Սիրիահայերի հիմնահարցեր. Պատմություն և արդիականություն» խորագրով հանրապետական գիտաժողովին: «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի և Գերմանական միջազգային համագործակցության խնայողական բանկերի հիմնադրամի միջև կնքված պայմանագրի համաձայն կազմակերպվել է «Ֆինանսական համակարգը ՀՀ-ում» խորագրով դասընթաց:

Նախարարությունը շարունակում է համագործակցել սիրիահայերի հիմնախնդիրներով զբաղվող պետական մարմինների, համահայկական, միջազգային կազմակերպությունների և հոգևոր կառույցների հետ՝ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի հետ միասին համակարգելով այլ կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի բաղադրիչների, ինչպես նաև շահառուների ընտրությունը: Շարունակվում է համագործակցությունը նաև «Հալեպ» հայրենակցական բարեսիրական, «Քեսաբ» հայրենակցական միավորում, «Սիրիահայերի միություն» հասարակական կազմակերպությունների հետ:

Նախարարությունը «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի միջոցով իրականացրել է մի շարք բարեգործական ծրագրեր, այդ թվում՝ «Սիրիահայ մշակույթի շունչը Երևանում» ավանդական դարձած բարեգործական ցուցահանդես - տոնավաճառներ՝ «Երևան Մոլ» առևտրի և զվարճանքի համալիրում, Սարգսրապատի հերոսամարտի հուշահամալիրում սիրիահայ 75 ձեռագործ վարպետների և հրուշակագործների մասնակցությամբ, կազմակերպել է նաև «Երևան էքսպո» ցուցահանդեսային համալիրում Հայաստանում արդյունաբերության ոլորտում սկյուռքահայ ներդրողների արտադրանքների ցուցահանդես-վաճառք, որին մասնակցել են սիրիահայ 16 գործարարներ:

Սիրիահայերի փախստականների տնտեսական ինտեգրման խնդիրների լուծմանը նպաստել է նաև սիրիահայերի հանդիպումը ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի հետ:

Սիրիահայերի խնդիրների հանրային իրազեկման, սոցիալական և կրթական ծրագրերի շրջանակում՝

«Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն» հայաստանյան ներկայացուցչության (ABA ROLI) հետ համատեղ սիրիահայերի համար շարունակվել է իրականացվել «Իրավաբանական աջակցություն տեղահանված և հակամարտությունից տուժած անձանց համար» ծրագիրը:

Քննարկումներ են կազմակերպվել նաև «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի, «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ-ի, Անարատ հղության հայ քույրերի միաբանության հայաստանյան մասնաճյուղի, «ԱՄՔՈՐ Հայաստան» կազմակերպության, «Իզմիրյան» և AFAP հիմնադրամների ներկայացուցիչների հետ:

ՀՀ մարզերում և Երևանում բնակվող սիրիահայ կարիքավոր 8 ընտանիքներ նախարարությունում հանդիպել են ԱՄՆ ՀԲԸՄ «Մանուկյան-Դեմիրճյան» վարժարանի սաների հետ, որոնք սիրիահայ յուրաքանչյուր ընտանիքին տրամադրել են դրամական օգնություն, բացի այդ նախարարության միջնորդությամբ Հայոց բանակում ծառայող 3 զինվոր ունեցող սիրիահայ Կազանյան ընտանիքը դրամական պարգև է ստացել ԱՄՆ «Հովնանյան» վարժարանի 7 սաների կողմից:

Միջոցառում 96.

ՀՀ նախարարին կից հասարակական խորհուրդներում քննարկել սույն գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը, ինչպես նաև համապա-

տասխան նախարարության կողմից մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված այլ միջոցառումներ

Հաշվետվություն

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում աշխատանքների թափանցիկությունը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի հարցերը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ քննարկումն ապահովելու նպատակով ՀՀ սփյուռքի նախարարին կից հասարակական խորհրդի նիստում «Սփյուռք» բաժնի գերակա խնդիրների և գործունեության միջոցառումների ծրագրի իրականացման շրջանակում քննարկվել է նախարարության կողմից կատարված աշխատանքները՝ Սիրիայի փախստականների կրթական, մշակութային, սոցիալական, տնտեսական ինտեգրման խնդիրների լուծմանը նպաստող ծրագրերով իրականացված միջոցառումների և ձեռնարկների մասին հարցը:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

Միջոցառում 58.

Գործատուին տրամադրել պետական աջակցություն զբաղվածության կարգավորման պետական ծրագրերով աշխատաշուկայում անմրցունակ և հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում

Հաշվետվություն

2016 թվականի հոկտեմբերի 24-ից նոյեմբերի 20-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ինքնազբաղվածության խթանման նպատակով փոքր ձեռնարկատիրության աջակցություն» ծրագրի շրջանակներում Զբաղվածության պետական գործակալության կողմից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ են ուղղորդվել 43 անմրցունակ անձիք: Վերջիններիս համար ՀՀ Արագածոտնի, ՀՀ Արմավիրի, ՀՀ Արարատի, ՀՀ Կոտայքի, ՀՀ Սյունիքի և ՀՀ Վայոց Ձորի մարզերում, ինչպես նաև Երևանում հիմնադրամի փորձագետների կողմից տրամադրվել է ուսուցում և անհատական խորհրդատվություն՝ 10 օր տևողությամբ: Ծրագրի արդյունքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի մարզային մասնաճյուղերի և կենտրոնական գրասենյակի փորձագետների օգնությամբ կազմվել են գործարար ծրագրեր՝ Զբաղվածության պետական գործակալության կողմից դրամաշնորհային ծրագրում ընդգրկվելու նպատակով:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին ուղղված աջակցության ծրագրի նպատակն է ՓՄՁ-ի զարգացման միջոցով զբաղվածության ու ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման ապահովումը սակայն «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագրում, անմրցունակ և հաշմանդամություն ունեցող անձիք որպես թիրախային խումբ չեն առանձնացվում:

Հետևաբար «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների» ծրագրի 58-րդ կետի առնչությամբ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունն առաջարկություններ չունի:

ՀՀ մշակույթի նախարարություն

Միջոցառում 53.

Կատարել ուսումնասիրություններ հուշարձանների տեղափոխման վերջին հինգ տարիների պրակտիկայի վերաբերյալ՝ վեր հանելով խնդիրները և ներկայացնելով լուծման առաջարկներ

Հաշվետվություն

- «Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին» 1985 թվականի կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված՝ հուշարձանների տեղափոխման կարգին համապատասխանեցնելու համար «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում 2015 թ. կատարվել է համապատասխան փոփոխություն:

- Հուշարձանների տեղափոխման դեպքերը կանխելու համար ներկայում կազմվել է ՀՀ կառավարության 2004 թ. հոկտեմբերի 7-ի N 1616-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակի 2-րդ հավելվածը (Երևան քաղաքի տեղափոխման ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակը) ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ և սահմանված կարգով ներկայացվել շահագրգիռ մարմիններ՝ կարծիքի: Այժմ դրանք ամփոփվել են, և առաջիկայում նախագիծը կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը:

Միջոցառում 66.

ՀՀ-ում տարեցների սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխման շրջանակներում սահմանել տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող խնամքի և սոցիալական ծառայությունների նոր մոդելներ, ինչպես նաև խնամքի ծառայությունների՝ վճարովի և համավճարի սկզբունքով մատուցման մեխանիզմներ

Հաշվետվություն

- ՀՀ կառավարության 2014 թ. սեպտեմբերի 18-ի նիստի «ՀՀ-ում տարեցներին սոցիալական ծառայություններ տրամադրելու հայեցակարգին և հայեցակարգի իրականացման 2015-2019 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցին հավա-նություն տալու մասին» N 39 արձանագրային որոշման միջոցառումների 1-ին կետի համաձայն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը պարբերաբար մասնակցել են տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտի օրենսդրության վերլուծության քննարկումներին, որի արդյունքում, հաշվի առնելով տարեցների կարիքները և ուսումնասիրված միջազգային փորձը՝ ներկայացվել է տարեցների համար մշակութային կյանքին մասնակցության ապահովման, տարեցների շրջանում ստեղծագործական գործունեության խրախուսման և խթանման, տարեցների ներուժի օգտագործմամբ երիտասարդ սերնդին ժողովրդական արհեստների փոխանցման վերաբերյալ միջոցառումներ, որոնք հաստատվել են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի «Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը և ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 20 արձանագրային որոշմամբ:

- ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող թանգարաններում հենաշարժական խնդիրներ ունեցող անձանց համար ստեղծվում են ազատ տեղաշարժման հնարավորություններ: Հարցն ամբողջությամբ (ազատ տեղաշարժ և սանհանգույցներ) լուծվել է Կոմիտասի թանգարան-ինստիտուտում (նորակառույց), Մ. Սարյանի տուն-թանգարանում (վերանորոգված): Հայաստանի ազգային պատկերասրահում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում հենաշարժական խնդիրներ ունեցող այցելուների տեղաշարժը կազմակերպվում է աշխատակիցների օգնությամբ՝ տեղում ստեղծելով հնարավորություններ: Հ. Թումանյանի և Ս. Փարաջանովի թանգարաններում, Օրբելի եղբայրների տուն-թանգարանում, Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանում անվասայլակի օգնությամբ տեղաշարժվող

անձանց համար անհրաժեշտ պայմաններ են ստեղծվել միայն առաջին հարկում: Երվանդ Քոչարի, Փայտարվեստի թանգարանները, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի «Զվարթնոց» մասնաճյուղը ապահովված են համապատասխան թեքահարթակներով:

- ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գերակա խնդիրները» հաստատելու մասին N 70-Ն որոշմամբ գերակա միջոցառումների ցանկում ընդգրկվել է «Ընտանեկան գրադարանավար» ծրագիրը, որն իրականացվում է ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ՝ ֆինանսավորվելով ՀՀ պետական բյուջեից: Ծրագիրը շարունակական է, այն իրականացվում է Շիրակի և Լոռու մարզերում՝ Շիրակի և Լոռու մարզային գրադարանների կողմից: Մարզերի ընտրությունը պայմանավորված է 1988 թվականի երկրաշարժից հետո այդ տարածաշրջանում հաշմանդամների թվի կտրուկ ավելացմամբ: 2017 թվականի առաջին կիսամյակում ծրագրի շրջանակներում սպասարկվել է 212 հաշմանդամ և տարեց, սպասարկվել է 3357 միավոր:

ՀՀ մշակույթի նախարարի 2017 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայության թանգարանների մշտական ցուցադրության այցելության և բացատրության (էքսկուրսիա) տոմսերի գներն ու արտոնությունները սահմանելու և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2009 թվականի օգոստոսի 3-ի N 458-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 368-Ա հրամանի 4-րդ կետի 1-ին ենթակետով ՀՀ կենսաթոշակառուների համար թանգարանների մուտքի տոմսի արժեքի համար սահմանվել է 50 տոկոս զեղչ, 7-րդ կետի 1-ին կետով հաշմանդամների համար սահմանվել է անվճար այցելության արտոնություն:

Միջոցառում 96.

ՀՀ նախարարին կից հասարակական խորհուրդներում քննարկել սույն գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը, ինչպես նաև համապատասխան նախարարության կողմից մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված այլ միջոցառումներ

Հաշվետվություն

ՀՀ մշակույթի նախարարի հրամաններով ստեղծված նախարարին կից հասարակական խորհրդի կազմում և իրականացվող աշխատանքներում ընդգրկված են հուշարձանների, ոչ նյութական մշակութային ժառանգության, հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների, կինեմատոգրաֆիայի, թատերարվեստի, երաժշտարվեստի, գրականության, պարարվեստի,

կերպարվեստի, թանգարանագիտության ոլորտների մասնագետներ: Ծրագրերի թափանցիկության, քաղաքացիների հանդեպ անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերելու նպատակով ՀՀ մշակույթի նախարարի, նախարարի տեղակալների կողմից իրականացվել է 341 քաղաքացու ընդունելություն (2017 թվականի հունվարից մայիսն ընկած ժամանակահատված):

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Միջոցառում 22.

Մշակել փոփոխություններ և լրացումներ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում

Հաշվետվություն

<<Տեղական հանրաքվեի մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>
ՀՀ օրենքի նախագիծը գտնվում է մշակման փուլում:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

Միջոցառում 61.

Վերանայել «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը և անհրաժեշտ փոփոխություններ առաջարկել հաշմանդամություն ունեցող անձանց վտանգավոր և արտակարգ իրավիճակներում պատշաճ հումանիտար աջակցություն ցուցաբերելու համար

Հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2017 թվականի մայիսի 23-ի թիվ 566 հրամանով հաստատվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության միջոցառումների ցանկը և ստեղծվել համապատասխան աշխատանքային խումբ:

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

Միջոցառում 74.

Ստորագրել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ-ի կոնվենցիան

Հաշվետվություն

«ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով սահմանված ստորագրման ընթացակարգը ապահովելու նպատակով ՀՀ ԱԳՆ-ն դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և արդարադատության նախարարություններ՝ կոնվենցիայի թարգմանությունը և ստորագրման նպատակահարմարության տեղեկանքը ստանալու նպատակով: Հաշվի առնելով նշված երկու գերատեսչությունների միջև իրավասու մարմին հանդես գալու հարցի շուրջ առկա տարաձայնությունը ներկայումս Կոնվենցիայի ստորագրման գործընթացը առկախված է: Տարաձայնության կարգավորումից հետո՝ ստորագրման համար պահանջվող վերոհիշյալ փաստաթղթերը ներկայցվելուն պես ՀՀ ԱԳՆ-ն կձեռնարկի ստորագրման համար անհրաժեշտ ընթացակարգի հաջորդ քայլերը:

Միջոցառում 76.

Մշակել «Կանանց, խաղաղության և անվտանգության մասին» ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի N 1325 բանաձևի առնչությամբ միջոցառումների ազգային ծրագիր (կատարման ժամկետը՝ 2018 թվականի երկրորդ եռամսյակ):

Հաշվետվություն

Ներկայումս նշված ազգային ծրագիրը մշակելու նպատակով ձևավորվել է աշխատանքային խումբ, նախապատրաստվում է ՀՀ վարչապետի որոշման նախագիծ:

Միջոցառում 90.

Ստորագրել ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոնվենցիայի անձնական հաղորդումների ընթացակարգերի մասին կամընտիր արձանագրությունը (կատարման ժամկետը 2019 թվականի երրորդ եռամսյակ):

Հաշվետվություն

Գտնվում է միջգերատեսչական համաձայնեցման փուլում:

ՀՀ պաշտպանության նախարարություն

Միջոցառում 30.

«Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկան ներառել ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում, ինչպես նաև ապահովել հեռուսուցման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում դրա հասանելիությունը

Հաշվետվություն

«Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկան ներառվել է ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում: Ներկայումս միջազգային կազմակերպությունների համագործակցության շրջանակում դիտարկում է առարկայի արդիականացման, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության առցանց տիրույթում հեռուսուցման տարբերակի մշակման հարցը:

Միջոցառում 32.

Ստեղծել մեխանիզմներ կայազորային մեկուսարաններում մշտադիտարկում իրականացնող դիտորդական խմբի գործունեության համար՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները և միջազգային լավագույն փորձը

Հաշվետվություն

Իրավասու ստորաբաժանումների կողմից քննարկվում է զորակոչիկների բժշկական զննության եզրակացության ակտի պարտադիր տրամադրման, ինչպես նաև զորակոչիկի, զինծառայողի և նրանց հավասարեցված անձանց, ընտանիքի անդամների իրավունքների, դրանց պաշտպանության, բողոքարկման, նրանց վերաբերյալ ընդունվող յուրաքանչյուր իրավական ակտի վերաբերյալ պարտադիր ծանուցման կարգը և մեխանիզմները իրավական ակտերի նախագծերում ներառելու հարցը:

Քննարկման փուլում են նաև ՀՀ ՊՆ ՌՈ կայազորային մեկուսարանների մշտադիտարկումը կազմակերպելու և այնտեղ պահվող անձնաց իրավունքների պաշտպանության նպատակով՝ դիտորդական խմբի ձևավորման ու դրա գործունեության մեխանիզմների սահմանման հարցերը:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերով նախարարություն

Միջոցառում 59.

Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար հնարավորություններ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում

Հաշվետվություն

2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել են հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում հնարավորությունների ապահովմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

Մարտի 14-25-ը Ավստրիայի Հանրապետության Գրաց քաղաքում տեղի են ունեցել հատուկ օլիմպիադաների աշխարհի ձմեռային խաղերը: Հայաստանի Հանրապետությունը ներկայացված է եղել «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպության 1 մարզիկով: Դահուկավազք (500 մ) մարզաձևում հանդես եկող Սիփան Ծաղկյանը գրավել է երկրորդ տեղը՝ նվաճելով արծաթե մեդալ:

Մայիսի 14-17-ը «Տ. Պետրոսյանի անվան շախմատի տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում անցկացվել է խուլերի շախմատի Հայաստանի Հանրապետության 12-րդ առաջնությունը, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի 34 խուլ շախմատիստներ (ընդամենը՝ 38 մարդ):

Մայիսի 17-19-ը Երևան քաղաքում անցկացվել է հաշմանդամների հանրապետական մարզական 15-րդ փառատոնը: Փառատոնին մասնակցել են 120 մարզիկներ Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերից և Երևան քաղաքից: Հաշմանդամ մարզիկները իրենց ուժերը չափել են 7 մարզաձևերում՝ սեղանի թենիս, սայլակներով բասկետբոլ, լող, բազկամարտ, ծանրամարտ, շախմատ և շոու դաուն: